**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3**

**«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/2» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան 11 մարտի 2019թ.

ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

Նախագահ՝ Արմեն Խաչատրյան

Քարտուղար՝ Նելլի Աբովյան

Գնահատող անդամներ՝ Հայկ Հովհաննիսյան,Արտուշ Կիրակոսյան

1. **«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/2» ծածկագրով ընթացակարգի գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման մասին.**

1.1 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/2» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնման ընթացակարգի հրավերը և հայտարարությունը 27.02.2019թ. հրապարակվել է www.apmeps.am կայքում, ինչպես նաև www.gnumner.am կայքում:

1.2 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացվել են 2019 թվականի մարտի 06-ին, ժամը՝ 11:00-ին apmeps համակարգի միջոցով: ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար 2019թ.-ի ընթացքում վառելանյութի ձեռքբերման նպատակով՝ գնանշման հարցման միջոցով էլեկտրոնային ձևով կազմակերպված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/2» ծածկագրով ընթացակարգի 06 մարտի ժամը՝ 11:30-ի բացման նիստում հանձնաժողովը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5)-րդ ենթակետով, թիվ 2 արձանագրությամբ որոշեց նիստը կասեցնել և «ՍիՓիէս Օյլ Քորփորեյշն» ՍՊԸ-ին և «ՖԼԵՇ» ՍՊԸ-ին հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների, քանի որ N1,2 չափաբաժինների մասով «ՍիՓիէս Օյլ Քորփորեյշն» ՍՊԸ-ն և «ՖԼԵՇ» ՍՊԸ-ն ներկայացրել էին նախահաշվային գնից բարձր գնային առաջարկ:

1.3 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/2» ծածկագրով գնանշման հարցման ձևով ընթացակարգի միաժամանակյա բանակցությունների նիստը պետք է տեղի ունենար 11.03.2019 թվականին ժամը 12:00-ին, ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության մասնաշենքում՝ ք.Երևան, Արշակունյաց-63 հասցեում: Սակայն Մասնակիցները նիստին չէին ներկայացել: Ուստի հիմք ենք ընդունում նրանց նախնական գնային առաջարկները:

1.4 Ստորև ներկայացվում է «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/2» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցների գնային առաջարկները՝ N1,2 չափաբաժնի մասով:

| Հ/հ | Գնման ապրանքի անվանումը | Գնման առարկայի նախահաշվային գինը (ՀՀ դրամ) | Մասնակցի գնային առաջարկը ընդհանուր չափաբաժնի համար (ՀՀ դրամ) | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | «ՍիՓիԷս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ | | «ՖԼԵՇ» ՍՊԸ | |
| | | | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ-ն | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ-ն |
| 1 | Բենզին, ռեգուլյար | 32190000 | 29000000 | 34800000 | 29362500 | 35235000 |
| 2 | Դիզելային վառելիք | 7200000 | 6300000 | 7560000 | 6375000 | 7650000 |

**2. ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար 2019թ.-ի ընթացքում վառելիքի ձեռքբերման նպատակով, գնանշման հարցման միջոցով, էլեկտրոնային եղանակով կազմակերպած «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/2» ծածկագրով ընթացակարգի N1,2 չափաբաժնի գնահատման արդյունքում հանձնաժողովը որոշեց՝**

2.1 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/2» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած, քանի որ մասնակիցների կողմից առաջարկված գնային առաջարկը գերազանցում է այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

2.2 Հրապարակել չկայացման մասին հայտարարությունը www.gnumner.am կայքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------------------------------- Ա. Խաչատրյան

Գնահատող անդամներ

1 ---------------------------------- Հ. Հովհաննիսյան

2 ---------------------------------- Ա. Կիրակոսյան

Քարտուղար՝ ---------------------------------- Ն.Աբովյան